



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

« 11 » հուլիսի 2019թ.

№ 2/3383-Ա

Հ Ր Ա Մ Ա Ն

Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԵՎ Կ.ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության 17-րդ կետի 5-րդ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննությունն անցկացնող հանձնաժողովի 2019 թվականի թիվ 41/2019 եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ կետերի պահանջները խախտելու, ծառայողական գաղտնիքը սահմանված կարգով չպահպանելու համար Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության ընթացիկ հսկողության թիվ 2 /Էրեբունո/ բաժնի ավագ հարկային տեսուչներ, ՀՀ հարկային ծառայության 2-րդ դասի խորհրդականներ Արսեն Արմենի Պողոսյանի և Կարեն Ռազմիկի Մուրադյանի դասային աստիճանները իջեցնել մեկ աստիճանով:
2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի անձնակազմի կառավարման վարչության պետ Ա.Վարդանյանին՝ սույն հրամանն իրազեկել ողջ անձնակազմին:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



Recoverable Signature

X

ՌԱՖԻԿ ՄԱՇԱԴՅԱՆ

Signed by: MASHADYAN RAFIK 3304710108

Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ

